

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը

02.07.2019



Մ/թ հունիսի 28-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանի մոտ կայացավ քաղաքացիների հերթական ընդունելությունը:

Ընդունելությանը մասնակցել են 93 քաղաքացիներ, որոնցից 90-ին տրամադրվել է դրամական օժանդակություն:

Երեք քաղաքացիներ դիմել էին այլ հարցերով՝

մեկ քաղաքացի դիմել էր բնակարանի գազաֆիկացման համար (ընթացքի մեջ է),

մեկ քաղաքացի՝ կով գնելու համար(ընթացքի մեջ է),

մեկ քաղաքացի էլ դիմել էր մատուռը վերանորոգելու աշխատանքներին օժանդակելու նպատակով(ընթացքի մեջ է):

Այլ խնդրանքով դիմած քաղաքացիների հարցերին լուծում տալու նպատակով, նույն օրը մարզպետ Տ. Սարգսյանը հանձնարարություններ է տվել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին: